

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
2005թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ,
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՍԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2005թ. ընթացքում փաստաթղթաշրջանառությունը հետևյալ թվային պատկերն է ներկայացնում.

1. Մտից թղթակցություն՝

ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ – 154 միավոր,
բ/ գրություններ նախարարություններից և այլ գերատեսչություններից (2286 միավոր), ՀՀ ԱՎԾ տարածքային ստորաբաժանումներից (1328 միավոր), արտասահմանյան երկրներից (1347 միավոր), այդ թվում՝ ԱՊՀ երկրներից (71 միավոր): Ընդամենը 4961 միավոր (2004թ.-ի 4696 միավորի դիմաց):

Ընդամենը մտից թղթակցություն – 5115 միավոր (2004թ. 4859-ի դիմաց),

2. Ելից թղթակցություն՝ 8366 միավոր (2004թ. 7130 միավորի դիմաց)

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2005թ. ընթացքում կազմել է 13481 միավոր (2004թ. 11989 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը, 2004թ. համեմատությամբ, 2005թ.-ին ավելացել է 256 միավորով, ելից թղթակցությունը՝ 1236 միավորով:

ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2005թ. ընթացքում վերահսկողություն է սահմանվել 107 փաստաթղթի և հանձնարարականի (ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ և հանձնարարականներ, արձանագրային հանձնարարականներ, այլ նախարարություններից գրություններ և այլն) կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: